

ԵՄ տարածաշրջանային հաղորդակցության ծրագիր Արևելյան գործընկերության երկրների համար «ԵՄ արևելյան հարևաններ» ('EUNEIGHBOURS east')

Իրականացման 08.12.2020 - 31.10.2025
ժամանակահատված:

Այլ երկրներ:

Ադրբեջան, Բելառուս, Հայաստան, Մոլդովա,
Ուկրաինա, Վրաստան

ԵՄ ներդրում: € 12 139 624

Ընդհանուր € 12 139 624
բյուջե:

Իրականացնող կազմակերպություն(ներ):

GOPA PACE led Consortium (former B&S Europe)

Նախագծի www.euneighbourseast.eu
կայքէջ:

Նախագծի

Նկարագրություն:

Եվրոպական միության տարածաշրջանային հաղորդակցության ծրագիրը (ԵՄ արևելյան հարևաններ 2020-2024) հաղորդակցման նոր ռազմավարական մոտեցման մի մասն է, որը մշակվել է Եվրոպական հանձնաժողովի Հարևանության և ընդլայնման բանակցությունների հարցերով գլխավոր տնօրինության (DG NEAR) և Արտաքին գործողությունների եվրոպական ծառայության (ԱԳԵԾ) ռազմավարական հաղորդակցության աշխատանքային խմբերի համատեղ գործակցությամբ: Այն ուղղված է ռազմավարական հաղորդակցական գործողությունների ամրապնդմանը, ԵՄ-ի և նրա քաղաքականության հասարակական ըմբռնման բարելավմանը, ինչպես նաև ԵՄ-ում ու նրա արևելյան հարևանության տարածքում ապատեղեկատվության նկատմամբ հասարակական դիմակայունության ձևավորմանը:

Եվրոպական միության հարևանության հաղորդակցության ծրագիրն ուղղված է լրացնելու և ամրապնդելու գործընկերային հարաբերությունները, սիներգիաները, որն իրականություն կդառնա ԵՄ պատվիրակությունների կողմից ազգային մակարդակում իրականացվող հաղորդակցական գործողությունների լայն շրջանակի միջոցով, որոնք ներառում են թեմատիկ հաղորդակցական արշավներ, հանրային դիվանագիտության գործողություններ և իրազեկման գործողություններ երիտասարդ ակտիվիստների, մեդիա գործընկերների, ազգային իշխանությունների, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների, գիտական շրջանակների և տարբեր մասնագիտական ցանցերի ու ասոցիացիաների հետ համագործակցությամբ:

Ակնկալվող արդյունքներ:

- Արևելյան հարևանության քաղաքացիների շրջանում ԵՄ-ի, նրա քաղաքականության և համագործակցության ծրագրերի վերաբերյալ իրազեկվածության բարձրացում և բարելավված ըմբռնում:
- Արևելյան գործընկեր երկրներից ԵՄ-ի հետ կապված տեղեկատվության, լուրերի, հնարավորությունների և հաջողության պատմությունների ընդգրկման ավելացում արդյունավետ առցանց հաղորդակցական հարթակի և խողովակների միջոցով:
- ԵՄ-ի և Արևելյան գործընկեր երկրների երիտասարդների միջև ամրապնդված երկխոսություն՝ երիտասարդ եվրոպական դեսպանների հզոր ցանցի և նրանց կազմակերպած քաղաքացիական ներգրավման գործողությունների միջոցով:
- Հաղորդակցման ամրապնդված կարողություններ՝ թվային հաղորդակցության ենթակառուցվածքի և ռազմավարական հաղորդակցության մոտեցման մասով:
- Համապատասխան միջազգային կառույցների և նախագծերի հետ հաստատված արդյունավետ կապեր և գործընկերություններ՝ Արևելյան հարևանության տարածքում ԵՄ-ի հաղորդակցման համար:
- Լրատվական և ոչ լրատվական գործընկերների զարգացած ցանց՝ ԵՄ-ի վերաբերյալ տեղեկատվության և ուղերձների տարածմանը նպաստելու նպատակով:
- Արևելյան գործընկեր երկրներում ԵՄ-ի վերաբերյալ հասարակական կարծիքի բարելավում պարբերաբար անցկացվող քանակական և որակական ուսումնասիրությունների միջոցով:



Սոցիալական ցանցերում օգտահաշիվների

հղումներ:

[instagram.com/euneighbourseast/](https://www.instagram.com/euneighbourseast/),
[facebook.com/euneighbourseast/](https://www.facebook.com/euneighbourseast/),
[flickr.com/people/euneighbourseast/](https://www.flickr.com/people/euneighbourseast/),
<https://vimeo.com/euneighbourseast>,
[youtube.com/@EUNEIGHBOURSeast](https://www.youtube.com/@EUNEIGHBOURSeast)